

ՊՍԱԿԻ ԶԱՐԳԸ

Գիտցի՛ր, որ Եւան որչափ ալ մերկ էր, Աստուծոյ փառքով զարդարուած էր, իսկ երբ մեղքի հանդերձը հագաւ, այն ատեն տգեղագոյնը եղաւ: Նոյն-պէս դուն, երբ զարդասիրութեան հագուստը հագնիս, Աստուծոյ փառքէն կը զրկուիս եւ կը տգեղնաս: Միածինը այլ զգեստ տուած է Աստուծոյ կողմէ հաւատացեալ կնոջ, համաձայն այն խօսքին, թէ՛ «Դուք, որ Քրիստոսով մկրտուած էք զՔրիստոս հագած էք» (Գաղ. Գ. 27):

Ըսէ՛, թագաւոր մը եթէ իր ծիրանին քեզի հագցնէ, եւ դուն անոր վրայ ցնցոտիներ կրէիր, միթէ չէի՞ր պատժուեր: Ասիկա ըսի, որպէսզի ցոյց տամ, թէ զարդասէրը առանց չարիք գործելու իսկ պիտի պատժուի, թէեւ առանց չարիքի չի կրնար ըլլալ ան, որովհետեւ ինքնաբերաբար փառասիրութեան եւ այլ մեղքերու կ'առաջնորդուի:

Բարի է ոսկին, երբ գայն կը բաշխենք, բայց ոչ՝ երբ անով ոտքերը եւ ձեռքերը երկրին կը կապենք, եւ որուն հետեւանքով կրնաս լսել ահաւոր այն խօսքը, թէ՛ «Կապեցէ՛ք անոր ոտքերը եւ ձեռքերը եւ դուրսի խաւարը հանեցէ՛ք գայն» (Մատթ. 22:13):

Գիտցի՛ր, որ զժոխքի վերակացուներուն անգամ չարիք կը սորվեցնես, որովհետեւ անոնք միայն ոտքերը եւ ձեռքերը գիտէին կապել, մինչ դուն գլուխդ, երեսդ, ականջներդ, վիզդ, կուրծքդ եւ մէջքդ զարդերով կը կապես: Գիտցի՛ր, որ եթէ բոլոր զարդերը դրամի վերածելով կարօտեաներուն չբաշխես եւ նեղութեան մէջ եղող գերիներու փրկագին չտաս, նոյնքան կապանք պիտի ընդունիս դեւերէն եւ արտաքին խաւարը պիտի հանուիս:

Բարսեղ Մաշկետրոցի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Կազմակերպութեամբ Կրօնական Ժողովին եւ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին, Երեքշաբթի, 30 Ապրիլ 2019-էն սկսեալ եւ ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց Եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Սուրբ պատարագի ընթացքին, հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Այս սուրբ պատարագին նպատակն է առիթ տալ մեր այն հայորդիներուն, որոնք Կիրակիի կողքին, շաբթուան ընթացքին եւս կը փափաքին Հայ Եկեղեցոյ հոգեւոր սնունդը ստանալ: Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները իրենց ամենօրեայ հեւքին մէջ պահ մը կանգ առնելու եւ աղօթքով Աստուծոյ ու իրարու հետ ըլլալու:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 - facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՅԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸՄԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 30 ՅՈՒՆԻՍ 2019 ԹԻՒ 26

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԸՆԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ ԵՍ. 1.2-15: ՀՈ. 6.12-23: ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 12.1-8

Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր: Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տես, աշակետներդ ինչ կ'ընեն. բան մը՝ որ արգիլուած է Շաբաթ օրով ընել»:

Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած թէ ինչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ոչ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շաբաթը եւ սակայն ասիկա մեղք չի համարուիր իրենց: Միայն կ'ըսես՝ ձեզի, որ տաճարէն ատելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք թէ ինչ կը նշանակէ մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ գոհ», այն ատեն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շաբաթին»:

Ի՞նչն է քեզի համար լաւ բանը

Օր մը երկինքով չհետաքրքրուած մարդու մը հարց տուի. «Ի՞նչն է քեզի համար լաւ բանը»: Ան պատասխանեց. «Դիրքն ու դրամը»: Ան ինքզինք խաբած պիտի ըլլար եթէ տարբեր պատասխան տար: Իսկ դուն, սիրելի ընթերցող, ի՞նչ է քեզի համար կարեւոր բանը. դիրքն ու դրամը, թէ՛ Յիսուսի սերն ու խաչը: Դիրքն ու դրամը չեն կրնար քեզի խաղաղութիւն տալ եւ հանգիստ շնորհել: Կրնաս մեծ գումարներ ունենալ բայց նոյնքան ալ մեծ մտահոգութիւններ: Կրնաս բարձր դիրքերու հասնիլ բայց երբեք ալ հանգիստ չգտնել: Աստուծոյ զաւակներէն շատե՛ր ոչ դիրք ունէին եւ ոչ ալ դրամ, բայց եւ այնպէս, ունէին ներքին խաղաղութիւն մը որ զիրենք անյաղթահարելի կը դարձնէր:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ

ԵՍԱՑԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԳԻՐՔԷՆ
1.2-15

Լսէ՛, ով երկրինէ՛, սկանջ դի՛ր, ով երկիր, որովհետեւ Տէրը կը խօսի. «Զաւակներ ծնայ եւ մեծցուցի, բայց անոնք զիս ուրացան: Նոյնիսկ եզր զինք պահողը կը նանչնայ, էշը գիտէ իր տիրոջ մտւորը, բայց Իսրայէլ իր Տէրը չի նանչնար, իմ ժողովուրդս չի հասկընար զիս»:

Ո՛վ մեղաւոր ազգ, անօրէնութեամբ լի ժողովուրդ, չար սերունդ, դո՛ւք, անօրէն զաւակներ: Լեցցի՛ք Տէրը, բարկացուցի՛ք Իսրայէլի Սուրբը, օտարացա՛ք եւ կոնակ դարձուցի՛ք:

Զի՞՞ քաւեր ձեր ստացած հարուածը, որ տակաւին կը շարունակէ՛ք ձեր մեղքերուն մէջ մնալ: Ահա հիւանդ է՛ք գրիտովին եւ տրտում է՛ք սրտովին. ոտքէն մինչեւ գլուխ առողջ տեղ չէ մնացած. վերքով, ուռեցճով ու թարախալից պալարներով ծածկուած է՛ք, որոնք կը մնան առանց սպեղանիի, ձեթի կամ վիրակապի:

Ձեր երկիրը աւերակ դարձած է, ձեր բաղնիքները հրկիզուած, ձեր աչքին առջեւ օտար ազգեր կ'աւարեն, կ'աւերեն ու կը կործանեն ձեր աշխարհը:

Սիոնի դուստրը՝ Նրուսադէմը միայն մնացեր է, այն ալ պաշարուած ու լքուած, նման՝ կուրբէն վերջ այգիին մէջ լքուած պահապանի հիւղակին, կամ սեխաստանին մէջ թողուած մրգապահներու ծածկին:

Նքէ՛ նրկնային Զօրքերու Տէրը մեզմէ՛ մնացորդներ պահած չըլլար՝ Սողոմոն կամ Գոմորի նման կորսուած պիտի ըլլային:

Շարունակել Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՅՈՍՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
6.12-23

Այսուհետեւ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հնազանդեցնելով: Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները անիրաւութեան գործիք դարձնելով, այլ որպէս մահուան կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծո՛յ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք: Մեղքը ձեր վրայ պէտք չէ իշխէ, քանի դուք օրէնքին ենթակայ չէք, այլ շնորհքին:

Ուրեմն ի՛նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ո՛չ օրէնքին, մե՞ղք գործենք: Բնա՛ւ երբեք: Լաւ գիտցէք թէ՛ որ ու ծառայութեան որ նուիրելիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք: Գոհութի՛ւն Աստուծոյ, որ թէ՛ եւ ժամանակ մը մեղքին ծառայ դարձած էիք, բայց որովհետեւ սրբտանց հնազանդեցաք ձեզի աւանդըւած վարդապետութեան օրինակին, մեղքի տիրապետութենէն ազատեցաք եւ արդարութեան ծառայ դարձաք: Ծառայի օրինակով կը խօսիմ, որովհետեւ այդպէս աւելի հասկնալի է ձեզի: Ինչպէս որ ժամանակ մը ձեր մարմինները անօրէնութեան տուած՝ պղծութեան եւ անօրէնութեան կը ծառայէիք, այնպէս ալ հիմա սրբութեան տուէք ձեր մարմինները եւ արդարութեան ծառայեցէք:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՀԱՅՈՑ ՍԻՐՏԻ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Ներսէս Հայրապետ կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին, Արշակ Բ. թագաւորի օրով: Ան թագաւորին քարտուղարն էր, սակայն Փառէն Աշտիշատեցի կաթողիկոսի մահէն ետք թափուր մնացած հայրապետական աթոռին համար արժանաւոր մէկը պէտք էր ընտրել: Այս արժանաւոր անձը հանդիսացաւ Յուսիկ Հայրապետի թոռը՝ Ներսէս:

Պատմութիւնը Ներսէս Հայրապետին ընծայած է ՄԵԾ Տիտղոսը իր կատարած մեծ գործերուն եւ բարեկարգութիւններուն համար: Հիմնական նպատակն էր հայ ժողովուրդի սիրտին մէջ քրիստոնէական ազնիւ զգացումները ներմուծել եւ արմատացնել: Այսպէս օրինակ, կը փառաբարձէր իր ժողովուրդը որ հեթանոսական սովորութեամբ մահուան առջեւ անյոյս չողբան, այլ՝ յարութեան յոյսով երկնքի արքայութեան հաւատան: Անդադար կը փառաբարձէր, որ մարդիկ բարեգործութիւն կատարեն եւ օրինակը ինքն իսկ տալով, իր տան մէջ կը հոգար որբերն ու չՖաւորները:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլխուն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց:

Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր: Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, փահաններ, եպիսկոպոսներ եւ քարոզիչներ ամէն կողմ դրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Ահա իր այս բարեսիրական գործերուն շնորհիւ է, որ ան դարձաւ Հայոց սրտի լուսաւորիչ:

Ե՞ՐԲ ԵՒ Ո՞Ր ՕՐԵՐՈՒՆ ԿԱՐԵԼԻ Է ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵԼ

Պատարագ կարելի է մատուցել ամէն օր, ինչպէս առաքելական դարու սովորութիւնն էր, բայց որպէսզի ժողովուրդը պարզ բան չկարծէ, Առաքելներուն յաջորդները սնօրինեցին Շաբաթ եւ Կիրակի օրերը Պատարագել: Սովորաբար առաւօտուն երբ սկսի, մինչեւ ժամը 12:00 կ'աւարտի, որովհետեւ այս միջոցին էր, որ Գողգոթայի Զոհը մատուցուեցաւ մեր մեղքերուն համար: Իսկ աստուածայատնութեան եւ Զատիկի ճրագալոյցին՝ երեկոյեան կը մատուցուի, աւելի հանդիսաւորութիւն տալու յաջորդող օրուան մեծ երկու տօներուն, որոնք երկու ծայրերն են մարդկութեան փրկագործութիւնը իրենց մէջ ամփոփող:

Ո՞Ր ՕՐԵՐՈՒՆ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵԼ

Առաջաւորաց Պահֆի հինգ օրերուն, Մեծ Պահֆին՝ բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, նոյնպէս հինգ նաւակաւորներու կիրակիներու հինգ օրերուն: Որովհետեւ ապաշխարութեան օրեր են, թէեւ շատ տեղեր Նաւակատեաց շաբաթներու ընթացքին Պատարագ կը մատուցեն:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

Իմաստութիւնը ճանապարհներուն սկիզբը կը փառաբանուի եւ հրապարակներուն վրայ բարձրաձայն կը հռչակուի պարիսպներուն բարձունքէն կը քարոզուի, ամրոցներուն դռներուն կը յայտարարուի եւ քաղաքներու դարպասներուն համարձակօրէն կը խօսուի:

(Առակաց Ա. 20-21)